community

The New Apostolic Church around the world

03/2021/AM

Ինչ Աստված տալիս է, միշտ էլ բավարար է

Խմբագրական
Աստված հոգում է մեզ համար

Ժամերգություն
Էական բանը, որ պետք է տալ Աստծուն, սիրտն է

Տեսություն
Աստծով պատկերով՝ տղամարդ և կին / մաս1/

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Աստված հոգում է մեզ համար

Ժամերգություն

4 Էական բանը, որ պետք է տալԱստծուն, սիրտն է

Մանկական անկյուն

10 Կույրի բշժկումը Երիքով քաղաքի մոտակայքում
12 Այցելություն Սարանգոոյին՝ Էրդենեթում /Մոնղոլիա/

Տեսություն

14 Աստծո պատկերով՝ տղամարդ և կին / մաս 1 /

Ընդհանուր լուրեր

18 Կանայք վաղ շրջանի եկեղեցում

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ ՆԱԵ Շվեյցարիա
Շապիկի հետևի լուսանկարը՝ CC. Շփինդլերի

Աստված հոգում է մեզ համար

Լուսանկարը՝ Միջազգային ԱՄԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

այսօրվա ժամանակները բավականին անսովոր են՝ մեկ ժամերգություն ենք ունենում, մեկ՝ չենք ունենում, մեկ տոնում ենք Սուրբ Հաղորդությունը, մեկ՝ չենք տոնում: Դա հարցեր է առաջացնում, այնքան շատ հարցեր, որ ես ես չեմ կարող բոլորին պատասխանել:

Այդ հարցերից մեկը հնչում է այսպես՝ Սուրբ Հաղորդությունն այլևս այնքան կարևոր չէ՞, ինչպես առաջ: Իմ պատասխանը հստակ է՝ ինչու չէ, Սուրբ Հաղորդությունը շատ կարևոր է: Այն Քրիստոսի եկեղեցու խորհուրդներից է և դրանով էլ՝ մարդկանց համար աստվածային ողորմածությունից բխող նվեր:

Այս առանձնահատուկ ժամանակներում ես ուզում եմ հիշել Իսրայելի ժողովրդին: Այն ժամանակ Աստված իր ժողովրդին առաջնորդում էր անապատով: Այնտեղ ոչինչ չկար: Եթե Աստված ժողովրդի համար մանանա չհոգար, նրանք կմահանային: Այս հարցում նրանք ամբողջովին ապավինում էին Աստծո հոգացությանը: Ամեն օր Աստված նրանց մանանա էր տալիս, և նրանք դա պետք է նույն օրն էլ ուտեին: Ով ուզում էր այն պահել հաջորդ օրվա համար, ստիպված էր հաստատել, որ այն փչանում է և ուտելու համար պիտանի չի լինում: Միայն վեցերերդ օրը Աստված նրանց կրկնակի բաժին տվեց: Դա նույն մանանան էր, սակայն այն կարելի էր պահել հաջորդ օրվա համար և ճաշակել:Դրանով Աստված ուզում էր ցույց տալ նրանց՝ Ես հոգում եմ ձեզ համար: Եթե ես ձեզ տալիս եմ, դուք պետք է վերցնեք: Եվ ես ինչ տալիս եմ ձեզ, միշտ էլ բավարար է: Այդպես է նաև մեզ մոտ: Մենք վստահություն ունենք և պետք է սովորենք ավելի շատ վստահել Աստծուն, նրա սիրուն, հոգացությանը, ամենազորությանը:

Այո, մենք կարիք ունենք Սուրբ Հաղորդության: Եվ մենք պետք է այն ընդունենք ամեն անգամ, երբ Աստված այն տալիս է մեզ: Եվ, երբ նա թույլ չի տալիս, որ մենք այն կարողանանք ստանալ, ապա նա հոգ է տանում այն բանի համար, որ նշխարը, որը մենք ընդունել ենք, բավականացնի այնքան ժամանակ, մինչև մենք այն նորից կստանանք: Դրան ես հավատում եմ:

Սրտանց ողջույններով՝

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Էական բանը, որ պետք է տալ Աստծուն, սիրտն է

Ամերիկյան Սամոան հյուրընկալեց շուրջ 60 000 մարդու, որոնց մեծ մասը՝ մոտ 98%-ը, քրիստոնյա է

Լուսանկարները՝ Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասի ՆԱԵ

Մովսես 1-ին, 4,4

,, Իսկ Աբելը բերեց իր ոչխարների առաջնեկներից ու գերերից: Աստված բարի աչքով նայեց Աբելին ու նրա ընտանիքին,,:

Սիրելի երեխաներ, իմ սիրելի քույր-եղբայրներ, ես շատ շնորհակալ եմ մեր երկնային Հորը, որ ես այս ժամերգությունը ձեզ հետ ապրելու իրավունքն ունեմ, և, որ մենք կարողացել ենք արժանանալ մեր երկնային Հոր օրհնանքին: Նա ուզում է մեզ օրհնել և զորացնել: Սուրբ Հոգու միջոցով նա ուզում է մեզ նախապատրաստել Քրիստոսի գալստյանը, իսկ այդ նախապատրաստությունն ունի երկու ասպեկտ՝ առաջինն այն է, որ մենք լսում ենք Աստծո խոսքը, իսկ մյուսն այն է, որ Սուրբ Հոգին ամեն օր մեզ նախապատրաստում է Քրիստոսի գալստյանը: Մեզ մնում է միայն, որ ժամանակ առ ժամանակ ստուգենք, թե արդյոք մենք առաջընթաց ենք ունենում այդ նախապատրաստության մեջ:

Ես մի պատմություն ունեմ երեխաների համար: Երբ ես դեռ երեխա էի և այցելում էի իմ պապիկին, նա ամեն անգամ ինձ տանում էր տան պատերից մեկի

մոտ և ուզում էր, որ ես այդ պատի մոտ կանգնեմ: Ապա նա մի գրիչ ձեռքին գալիս էր և պատի վրա, իմ գլխավերևում նշան էր անում: Հաջորդ անգամ, երբ ես գնում էի, նա նույնն էր անում: Նա շատ էր հպարտանում, երբ տեսնում էր և կարողանում էր ինձ էլ ցույց տալ իմ մեծանալը. ,, Տեսնու՞մ ես, վերջին անգամ նշումը այստեղ էր, իսկ հիմա այստեղ է, դու մի փոքր մեծացել ես,,: Երբեմն ես մի քիչ ձգվում էի և ինձ ավելի մեծացնում: ,, Ոչ, ոչ, ճիշտ կանգնիր,,- ասում էր նա: Մեր երկնային Հայրը հենց նույնն է ուզում մեզ հետ անել: Նա հաստատ գիտի, թե ինչպիսին ենք մենք և ինչպիսին է մեր հոգևոր աճը, սակայն, նա ցանկանում է, որ մենք դա գիտակցենք: Դրա համար էլ նա երբեմն թույլ է տալիս, որ մեր աղոթքները լսելի չդառնան, մեր ցանկությունը չի կատարվում: Գուցե և որևէ մեկը մեզ վիրավորել է, այդ ժամանակ մեր երկնային Հայրը ուզում է ստուգել մեզ, թե արդյոք մենք նույն ձևով ենք արձագանքում, ինչպես երկու տարի առաջ նման իրավիճակում, թե՞ փոխվել ենք, արձագանքում ենք այնպես, ինչպես այն ժամանակ, թե՞ հասունացել ենք և ինչ-որ բան ենք սովորել:

Սիրելի քույր-եղբայրներ, հաջորդ անգամ, երբ դուք ինչ-որ առանձնահատուկ բան ապրեք, մտածեք այս մասին: Գուցե Աստված միայն ցանկանում է ձեզ ցույց տալ, որ դուք հասունացել եք, կամ ընդհակառակը, նա ցանկանում է, որ մենք գիտակցենք, որ արձագանքը նույնն է, ինչպես այն ժամանակ, որ ոչ մի աճ տեղի չի ունեցել, և մենք պետք է ինչ-որ բան անենք: Գիտեք, երբ ինձ որևէ մեկը մի բան է ասում, որն ինձ վիրավորում է, և ես արձագանքում եմ այնպես, ինչպես երկու տարի առաջ, ապա ես պետք է ինչ-որ բան փոխեմ, որովհետև ինձ մոտ ինչ-որ բան այն չէ:

Այսօրվա մեր աստվածաշնչյան խոսքը վերցրված է Կայենի և Աբելի պատմությունից: Դուք գիտեք այդ պատմությունը: Կայենն ու Աբելը Ադամի և Եվայի երկու որդիներն էին: Կայենը հողագործ էր, իսկ Աբելը՝ հովիվ: Մի օր երկուսն էլ ուզում են Աստծուն զոհաբերություն մատուցել: Կայենը բերում է դաշտի պտուղներից, իսկ Աբելը՝ ոչխար: Աստված նախ՝ ուսումնասիրում է մարդկանց և հետո՝ զոհաբերության ընծաները: Եվ երբ նա տեսնում է սրտի ներքին դրությունը, հասկանում է. ,, Օ, Կայենի սրտի ներքին դրությունը լավը չէ,,; քանի որ նրանց զոհաբերական ընծաները արդյունք էին իրենց սրտի արտահայտության: Կայենը Աստծուն մատուցում է դաշտի պտուղներից, իսկ Աբելը իր հոտի առաջնեկին՝ ամենալավին: Աբելը համարում էր, որ ամենլավը հենց Աստծո համար պետք է լինի, և դրա համար էլ Աստված տեսնում է, որ Աբելի զոհաբերությունը ողորմածության արժանի է և օրհնում է այն:

Զոհաբերության թեման Հին կտակարանում լայն ավանդույթ ունի և բավականին բարդ է: Հին կտակարանում հավատացյալները զոհաբերություն էին մատուցում Աստծուն, որպեսզի նրան փառաբանեն: Նրանք նրան զոհաբերական ընծաներ էին մատուցում, որպեսզի ցույց տան, որ նա է տվողը. ,, Ինչ մենք ունենք, մեզ ինչ-որ կուռքեր չեն տվել: Դա նաև մեր աշխատանքի արդյունը չէ: Ամենազոր Աստվածն է տվողը, նա մեզ տալիս է այն, ինչի կարիքն ունենք,,:

Նրանք պատվում էին Աստծուն՝ գիտակցելով, որ նա Ամենազորն է, ամեն ինչ գալիս է Աստծուց: Նրանք մատուցում էին իրենց զոհաբերությունը, որպեսզի տվողին ամեն ինչի համար շնորհակալություն հայտնեն: Հրեաները Աստծուն շնորհակալ էին երկրային բարիքների համար, սակայն, նաև՝ առանձնապես իրենց

Որպես քրիստոնյաներ՝ մենք շատ պատճառներ ունենք Աստծուն զոհաբերություն մատուցելու:

Ամերիկյան Սամոայում կա երկու նորառաքելական եկեղեցի մոտ 200 անդամներով, ովքեր հոգևոր խնամք են ստանում տասնմեկ սպասավորի կողմից

փրկության համար, քանի որ Ամենազորը նրանց ազատել էր եգիպտական գերությունից: Նրանք շնորհակալ էին Աստծուն, որովհետև նա այդ փոքր, թույլ ժողովրդին ընտրել էր որպես իր ժողովուրդ, իսկ դա մեծ բան էր, նրանց շնորհակալական զոհաբերության իմաստն էր՝ Աստված մեզ ազատել է, Աստված մեզ ընտրել է:

Սակայն, զոհաբերությունը բաղկացած էր ավելի շատ բաներից, քան՝ միայն երկրպագությունից ու շնորհակալությունից: Որոշակի զոհաբերության ժամանակ նրանք մորթում էին անասուն և մատուցում: Անասունի մի մասը ողջակիզվում էր- դա Աստծո համար էր- իսկ մնացածով ընդհանուր ճաշկերույթ էր տոնվում: Իսկ դա նշանակում էր՝ մենք միասին ենք Աստծո հետ, մենք ուտում ենք միասին: Դրա իմաստը հետևյալն էր՝ մենք կերակուրը կիսում ենք Աստծո հետ: Նա ստանում է իր բաժինը, իսկ մենք՝ մերը, և դրանով մենք միասնություն ենք կազմում, մենք պատկանում ենք միմյանց: Սա զոհաբերության գեղեցիկ ըմբռնում էր՝ մենք պատկանում ենք միմյանց, մենք ուտում ենք միասին, Աստված ստանում է իր բաժինը, մենք ստանում ենք մեր բաժինը: Մովսեսն ասում էր մարդկանց. ,, Դուք մեղավոր եք, դուք ի վիճակի չեք լսելու Աստծուն,,: Այսպես, նրանք ստիպված էին զոհաբերություն մատուցել, որպեսզի Աստծո հետ հաշտվեին: Այդ ընծաներով նրանք խոստովանում էին իրենց մեղքը. ,, Մենք մեղավորներ ենք, մենք կարիք ունենք ներման: Խնդրում ենք, ներիր մեզ, խնդրում ենք, ողորմած եղիր մեր հանդեպ,,:

Եվ վերջին կետը՝ եթե ժողովուրդը Աստծու կողմից առանձնահատուկ օգնության կամ օրհնանքի կարիք է ունեցել, աղոթել է և առանձնահատուկ զոհաբերություն մատուցել այն հույսով, որ Աստված կպատասխանի իր աղոթքին, կօրհնի և իրեն կօգնի:

Սա էր Հին կտակարանում զոհաբերական ընծաների ու զոհաբերության նշանակությունը: Դրանով մարդիկ ուզում էին պատվել Աստծուն: Նրանք ուզում էին շնորհակալություն հայտնել նրան: Նրանք ուզում էին նրա հետ միասնություն կազմել և ուզում՝ էին հաշտվել նրա հետ՝ չնայած իրենց մեղքերին: Եվ նրանք ուզում էին, որ Աստված լսի իրենց աղոթքները:

Մեծ փոփոխությունը Նոր կտակարանում այն էր, որ Հիսուսը՝ Աստծո Որդին, իրեն զոհաբերեց: Իր զոհաբերությամբ նա մարդկանց հաշտեցրեց Աստծո հետ և բոլոր նրանք, ովքեր հավատում և

հետևում են նրան, փրկվում են: Փրկվելու համար այլևս զոհաբերության անհրաժեշտություն չկա: Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը կատարյալ է և հավերժ վավերական է բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին: Այսինքն՝ փրկվելու համար այլևս անհրաժեշտություն չկա այլ զոհաբերություն կատարելու:

Սակայն, զոհաբերություն կատարելու այնքան շատ պատճառներ կան: Մենք զոհաբերություն ենք անում Աստծոն գովաբանելու և նրան շնորհակալություն հայտնելու համար: Երբ մենք մատուցում ենք մեր զոհաբերությունը, խոստովանում ենք, որ լիովին կախված ենք Ամենազորից: Այն ամենը, ինչ մենք ունենք, տրվում է Աստծուց: Նա է տվողը:

Մենք ուզում ենք ուժեղ միասնություն ունենալ Աստծո հետ:

Մենք հավատում ենք Արարչին: Մենք հավատում ենք, որ ամեն ինչ նրա կողմից է տրվում: Մենք լիովին գտնվում ենք Աստծո ողորմածության ներքո: Այսպիսով, մեր զոհաբերությունը նախ և առաջ մեր հավատի խոստովանությունն է: Մենք հավատում ենք Հայր Աստծուն:

Նա հոգում է մեզ համար նրանով, որ տալիս է այն ամենը, ինչի կարիքն ունենք երկրի վրա, և մենք շնորհակալ ենք նրա ողորմածության ընծաների համար: Իսկ մեր զոհաբերությունը մեր

Ժամերգությանը մասնակցում էր տեղի 168 հավատացյալ



շնորհակալության արտահայտությունն է Աստծո հանդեպ : Երբ մենք մեր զոհաբերություն ենք մատուցում, մենք շնորհակալություն ենք հայտնում նրան երկրային ընծաների համար: Մենք գիտենք, որ այն ողորմածություն է: Աստված ստիպված չէ մեզ տալ այն, ինչի կարիքը մենք ունենք: Շատ մարդիկ կան, ովքեր ավելի քիչ ունեն, քան՝ մենք, և նրանք նույնպես վաստակում են այնքան, ինչքան՝ մենք: Եվ այսպես, մենք մեր զահաբերությունն ենք մատուցում Աստծուն՝ տվողին, շնորհակալություն հայտնելու համար:

Մենք շնորհակալ ենք Աստուն այն փրկության համար, որը նա նվիրել է մեզ: Մենք շնորհակալ ենք Հիսուսին իր մեծ զոհաբերության համար: Մենք շնորհակալ ենք Աստծուն, որ նա մեզ որպես իր զավակներ է ընտրել: Մենք շնորհակալ ենք Աստծուն փրկության համար և նրան հոգևոր զոհաբերություն ենք մատուցում: Մենք այլևս ոչ մի ոչխար չենք ողջակիզում:

Երբ մենք մկրտվում և կնքվում ենք, մենք նրան ենք նվիրում մեր կյանքը: Երբ մենք կնքվում կամ կոնֆիրմացիա ենք անցնում, ասում ենք. ,, Այժմ ես պատկանում են քեզ: Ես քոնն եմ,,: Դա խոստում է, որը մենք տալիս ենք Աստծուն.,, Դու ինձ փրկել ես, ես քեզ եմ զոհաբերում իմ կյանքը,,: Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում հոգևոր զոհաբերությամբ:

Հոգևոր զոհաբերությունն այնէ, երբ բարին ես անում մերձավորի հանդեպ կամ օգնում ես կարիքի մեջ գտնվող մարդուն: Երբ մենք մեր հոգևոր հարստություններն ենք կիսում նրանց հետ, ապա դա զոհաբերություն է, աստվածահաճո է: Մենք փրկության համար շնորհակալ ենք Աստծուն նրանով, որ մենք բարին ենք անում ու օգնում ենք ուրիշներին և նրանց հետ կիսում ենք մեր հոգևոր հարստությունները: Այս ձևով մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն երկրային ընծաների համար, այն ամենի համար, ինչի կարիքը մենք առօրյայում ունենք: Մենք շնորհակալ ենք Աստծուն փրկության համար, որը նա նվիրում է մեզ, և մենք շնորհակալ ենք նրան այն ամենի համար, ինչը մենք ապրում ենք նրա եկեղեցում:

Մեզ համար շատ կարևոր և իմաստալից է այն, որ մենք կարողանում ենք տոնել Սուրբ Հաղորդությունը, որ մենք համայնքի մասնիկն ենք, որ մենք և մեր երեխաները հավատով են դաստիարակվում, որ մենք կարողանում ենք գեղեցիկ եկեղեցում հավաքվել, որ մենք եղբայրներ ունենք, ովքեր լիազորված են քարոզելու, որ մեզ ժամանակ առ ժամանակ առաքյալ է այցելում: Մենք շնորհակալ ենք, քանի որ այդ ամենը մեզ համար կարևոր է: Եվ դրա համար էլ մենք մեր զոհաբերությունն ենք մատուցում, որպեսզի պահենք այդ եկեղեցին:

Մենք ուզում ենք, որ մեր եկեղեցին գործող եկեղեցի լինի: Այս ձևով մենք կկարողանանք արտահայտել մեր շնորհակալությունը՝ զոհաբերելով և հոգևոր զոհաբերություն մատուցելով Աստծուն շհորհակալություն հայտնելու երկրային ընծաների, մեր փրկության և եկեղեցու համար:

Մենք հիշում ենք, որ հրեաները զոհաբերություն էին մատուցում, որպեսզի Աստծո հետ միասնություն կազմեին: Մեր մեծ ցանկությունն է Հիսուս Քրիստոսի հետ կատարյալ միասնություն ունենալը: Եվ որպեսզի Քրիստոսի հետ միասնություն ունենանք, մենք պետք է մերժենք այն ամենը,

ինչը համահունչ չէ Հիսուսին, այսինքն՝ բոլոր այն բաները, որոնք կարող ենք խանգարել Աստծո հետ մեր միասնությանը: Մենք ունենք որոշակի կարծիք և դա մեր կարծիքն է: Մենք համոզված ենք, որ դա ճիշտ է:

Սակայն ժամանակի հետ մենք հասկանում ենք, որ Հիսուսը ուրիշ կարծիք ունի: Այս յուրահատուկ կետում մենք համահունչ չենք: Սակայն, քանի որ մենք ուզում ենք Հիսուսի հետ միասնական լինել, հրաժարվում ենք մեր կարծիքից: Մենք մերժում ենք այն: Գուցե մենք ցանկություն ունենք չարձագանքելու Աստծուն: Սակայն, մենք ուզում ենք Աստծո հետ միասնական լինել: Այդ անպատասխան ցանկությունը կարող է ընկալվել որպես խոչընդոտ Աստծո հետ մեր միասնության համար, և դրա համար էլ հրաժարվում ենք դրանից և Աստծուն ասում. ,, Լավ, եթե սա քո կամքը չէ, ես կհրաժարվեմ դրանից: Ինձ համար կարևոր է, որ ես քեզ հետ միասնական լինեմ,,: Սա հոգևոր զոհաբերություն է, որն ամրացնում և ուժեղացնում է մեր միասնությունը Աստծո հետ: Մենք թողնում ենք այն ամենը, ինչը կարող է Աստծո հետ մեր միասնության համար խոչընդոտ հանդիսանալ:

Հրեաները ստիպված էին զոհաբերություն կատարել, որպեսզի հաշտվեն Աստծո հետ: Քրիստոսի զոհաբերության շնորհիվ մենք ստիպված չենք ներում ստանալու համար զոհաբերություն մատուցել: Սակայն, Հիսուսը ցանկանում է, որ մենք հրաժարվենք ինչ-որ բանից, որպեսզի ներման արժանանանք: Նա ուզում է, որ մենք դադարեցնենք բողոքն ու կշտամբանքը մերձավորի հանդեպ: Նա ուզում է ,որ մենք դադարեցնենք այդ հավերժական մեղադրանքները: Նա ուզում է, որ մենք հրաժարվենք վրեժխնդրությունից: Նա ուզում է, որ մենք հասկանանք, որ անպայման չէ, որ մեղավորը երկրի վրա իր պատիժը կրի: Նա ուզում է, որ մենք հասկանանք, որ մեղավորը, պարտատերը կարող է ներվել:

Միշտ չէ, որ հեշտ է հրաժարվել արդարության մարդկային պատկերացումից: Սակայն, Հիսուսն ասում է մեզ. ,, Եթե դու ուզում ես, որ ես քեզ ներեմ, դու պետք է պատրաստ լինես ներելու քո մերձավորին: Դադարեցրու նրան կշտամբելը: Դադարիր բողոքել նրանից: Մի մտածիր վրեժի մասին,,: Մենք պետք է ներում ստանալու համար հոգևոր զոհաբերություն մատուցենք:

Եվ հետո, քույրեր և եղբայրներ, լինում է այնպես, որ մենք հատուկ խնդրանք ենք ունենում: Գուցե և մենք որևէ ցանկություն ենք ունենում մեզ համար կամ խնդրանք մեր մերձավորի համար, կամ բարեխոսում ենք անդրշիրիմյան աշխարհի հոգիների համար: Ես գիտեմ շատ քույր – եղբայրների մասին, ովքեր կարծում են. ,, Օ, ես աղոթում եմ և Աստծուն առանձնահատուկ զոհաբերություն եմ մատուցում,,: Ի՞նչ է թաքնված դրա հետևում: Ամբողջովին պարզ է, որ մենք չենք կարող գնել Աստծո օգնությունը: Անգամ, եթե ես նրան միլիարդ ամերիկյան դոլար զոհաբերեմ, ես չեմ կարող նրան ստիպել իրականացնելու իմ ցանկությունը և նրան իմ կամքը պարտադրելու: Աստծուն չի հետաքրքրում իմ փողը: Նա դրա կարիքը չունի: Ես չեմ կարող Աստծո օրհնանքը գնել: Ես չեմ կարող Աստծո օգնությունը վաստակել:

Այդ դեպքում ինչու՞ են քույր-եղբայրները այդպես անում: Ինչու՞ ենք նրանք առանձնահատուկ զոհաբերություն մատուցում, երբ նրանք խնդրելիս են լինում ինչ-որ բանի համար: Դրանով նրանք ուզում են Աստծուն ցույց տալ, թե ինչ կարևոր է իրենց համար այդ խնդրանքը, թե ինչքան են ցանկանում մերձավորի բարեկեցությունը: Մեր զոհաբերությունը լրացնելու է մեր աղոթքը և պետք է ցույց տա, որ խնդրանքն իսկապես ինչ-որ բան է նշանակում մեզ համար, որ այն կարևոր է: Մյուս կողմից՝ այն նշան է վստահության: Մեր զոհաբերության միջոցով մենք ուզում ենք Աստծուն շնորհակալություն հայտնել, նախքան նա կպատասխանի մեր աղոթքին: Եվ դրանով մենք ուզում ենք ապացուցել, որ մենք վստահում ենք Աստծո բարեգործությանը. ,, Ես վստահում եմ քո սիրուն, ես վստահում եմ քո բարեգործությանը: Դու ինձ տալու ես այն, ինչի կարիքը ես ունեմ: Ճիշտ պահին դու ճիշտն ես անելու: Եվ դրա համար ես նախապես շնորհակալ եմ քեզ,,: Դրանով մենք արտահայտում ենք մեր վստահությունը Աստծո հանդեպ. ,, Ես վստահում եմ քեզ: Դու օգնելու ես ինձ, և և ինչ էլ դու անես, կլինի լավագույն լուծումն ինձ համար,,:

Տեսնում եք, որ նաև որպես նորառաքելական քրիստոնյաներ, մենք շատ պատճառներ ունենք Աստծուն մեր շնորհները և հոգևոր զոհաբերությունը մատուցելու: Դրանով մենք խոստովանում ենք մեր հավատը ամենազոր Աստծո և Արարչի հանդեպ: Մենք շնորհակալ ենք նրան առօրյայում մեզ օգնելու համար, և մեր զոհաբերությունը դրա համար է: Մենք մեր հոգևոր զոհաբերությամբ շնորհակալ ենք նրան մեր փրկության համար: Մենք ջանում ենք բարին անել, օգնել նրանց, ովքեր կարիքի մեջ են, և մենք ուզում ենք մեր հոգևոր հարստությունները կիսել

Համայնքը տոնում է Սուրբ Հաղորդությունը
ննջեցյալների համար

մյուսների հետ: Մենք շնորհակալ ենք Աստծուն, որ մենք մասնիկն ենք եկեղեցու, և օժանդակում ենք եկեղեցուն ու մատուցում ենք մեր զոհաբերությունը: Մենք ուզում ենք Հիսուսի հետ ամուր միասնություն ունենալ և դրա համար էլ հրաժարվում ենք բոլոր այն գաղափարներից ու երևույթներից, որոնք կարող են խանգարել այդ միասնությանը: Եվ որպեսզի մեր մեղքերը ներվեն, մենք թողնում ենք վրեժի և պատժի մեր մտքերը: Մենք դադարեցնում ենք մեր գանգատներն ու կշտամբանքները մեր մերձավորի հանդեպ: Եվ եթե մենք ցանկանում ենք, կարող ենք մեր աղոթքը զուգակցել զոհաբերության հետ, ոչ թե՝ օգնությունը գնելու, ոչ թե մեր կամքը Աստծուն պարտադրելու, այլ նրան ցույց տալու, թե ինչ կարևոր է այդ ցանկությունը և, որ մենք վստահում ենք իրեն. ,, Ինչ էլ դու միշտ անես, մենք շնորհակալ ենք քեզ,,: Աստված նախ նայում է մարդկանց և հետո՝ զոհաբերությանը: Եթե այն մատուցվում է մաքուր սրտով, նա կօրհնի մեր զոհաբերությունն ու զոհաբերական ընծաները: Որոշիչը սիրտն է, ոչ թե՝ մեր ընծաները: Հիսուսը պարզաբանում էր, որ մարդիկ կան, որոնք մեծ գործեր են անում իր համար, բայց ոչ սրտի ներքին ճիշտ դրությամբ: Դրա համար էլ նա նման դեպքերում ասում է. ,, Ես քեզ չեմ ճանաչում,,:

Մյուս կողմից, եթե մեր սրտի ներքին դրությունը աստվածահաճո է, մենք Աստծուն չենք ասելու. ,, Ես տալիս եմ քեզ, ինչը մնացել է,,: Քանի որ Աստված մեր սկզբնական առաջնայնությունն է, մենք չենք կարող Աստծուն ասել. ,, Ախ, ես փող չունեմ այս ամիս: Ցավում եմ, բայց ես չեմ կարող քեզ համար զոհաբերություն կատարել: Ախ, ես այնքան զբաղված եմ, ես այլևս ժամանակ չունեմ քեզ ծառայելու,,: Այդպես չի լինի: Հիշեք Աբելին: Նրա սիրտի ներքին դրությունը ճիշտ էր: Նրա կարծիքով ամենալավը Աստծունն էր լինելու: Աստված հավատարիմ է: Բոլոր զոհաբերություններն ու զոհաբերական ընծաները, որոնք մենք մաքուր սրտով ենք մատուցում, նա օրհնելու է: Եվ իմ ցանկությունն է, որ մենք այդ ամենը ապրենք: Ամեն:

Հիմնական մտքեր

Մեր զոհաբերության և զոհաբերական ընծաների միջոցով մենք արտահայտում ենք մեր երկրպագությունը Աստծուն, շնորհակալությունը, նրա հետ միասնություն ունենալու մեր փափագը, ներում ստանալու ձգտումը և նրա հանդեպ մեր վստահությունը:

ԿՈՒՅՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԵՐԻՔՈՎԻ ՄՈՏ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 10, 46-52-Ի

Հիսուսը ուսուցանում էր մարդկանց, նա բժշկում էր հիվանդներին և կյանք էր վերադարձնում մահացածներին: Շատ մարդիկ էին գնում նրա հետևից, երբ նա իր աշակերտների հետ դուրս եկավ Երիքով քաղաքից:

Ճանապարհի եզրին նստած էր մի կույր մուրացկան, նրա անունը Բարտիմեոս էր: Երբ նա լսում է, որ անցնողը Հիսուս Նազովրեցին է, սկսում է աղաղակել.,, Հիսուս, օգնիր ինձ: Ողորմիր ինձ,,:



Մարդիկ նրան սաստում են, որ նա լռի, իսկ Բարտիմեոսը ավելի բարձր է աղաղակում. ,, Հիսուս օգնիր ինձ, ողորմիր ինձ,,։
Հիսուսը կանգնում է և ասում.,, Կանչեք նրան,,։
Մարդիկ կանչում են կույրին և ասում. ,, Քաջալերվիր, վեր կաց, Հիսուսը կանչում է քեզ,,։
Բարտիմեոսը դեն է նետում իր վերարկուն, վեր է կենում և գնում Հիսուսի մոտ։ Նա հարցնում է Բարտիմեոսին. ,, Ի՞նչ ես ուզում, որ քեզ համար անեմ,,։
Կույրն ասում է նրան.,, Վարդապետ, ես ցանկանում եմ նորից տեսնել կարողանալ,,։
Հիսուսն ասում է նրան. ,, Գնա, քո հավատը քեզ փրկեց,,։
Բարտիմեոսը կարողանում է նորից տեսնել և գնում է Հիսուսի հետ։

Աղբյուրը՝ ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 08/2020; ձևավորումը՝ Միրելյա Ֆորտունատովի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԱՆԳՈՈՅԻՆ՝ ԷՐԴԵՆԵԹՈՒՄ / ՄՈՆՂՈԼԻԱ/



Ողջույն, իմ անունը Սարանգոո է: Այս լուսանկարում դուք տեսնում եք, թե ինչ տեսք ունեի ես, երբ փոքր էի:

Մի քանի տարի անց ես դարձա դպրոցական: Իմ ընտանիքի հետ այս լուսանկարը արվել է դպրոցի առաջ:

Հիմա ես ութ տարեկան եմ և հաճախում են երրորդ դասարան: Մեր դասարանում կա 38 աշակերտ: Այս լուսանկարը ցույց է տալիս ինձ դպրոցական ներկայացումներից մեկի ժամանակ,

...իսկ մյուսը՝ Սուրբ Ծննդյան ժամանակ, տոնածառի մոտ:

Այստեղ դուք տեսնում եք իմ ընտանիքին: Դուք գիտե՞ք, որ մոնղոլ երեխաները , դուք,-ով են խոսում իրենց ծնողների հետ: Դա այստեղ ընդունված է: Ես ունեմ չորս քույր-եղբայր, մեկ կրտսեր ու մեկ ավագ եղբայր, և մեկ կրտսեր ու մեկ ավագ քույր:

Այս լուսանկարն արվել է Ուլան- Բատորում՝ մեր երկրի մայրաքաղաքում, երբ գլխավոր առաքյալը ժամերգություն էր անցկացնում այնտեղ: Ես կրում եմ սպիտակ մազակալ: Հենց իմ առաջ կանգնած է իմ կրտսեր եղբայրը:

Իմ փոքր քույրը շատ նրբագեղ է, այդպես եմ գտնում ես: Ամառային արձակուրդների ժամանակ ես հետևում եմ իմ քույր-եղբայրներին:

Մենք ապրում ենք Մոնղոլիայում: Մեր երկիրն ունի երկու հարևան երկրներ՝ հյուսիսում Ռուսաստանն է, իսկի հարավում՝ Չինաստանը: Չինաստանն ու Ռուսաստանը կապված են մայրուղով և միջմոնղոլական երկաթուղով, որն անցնում է մեր երկրով: Մենք ապրում ենք Էրդենեթում: Այն Ուլան- Բատորից հետո Մոնղոլիայում երկրորդ մեծ քաղաքն է: Մեր քաղաքը շատ մաքուր է:



Էրդենեթում կա պղնձի մեծ գործարան և գորգագործական ֆաբրիկա: Այստեղ է գտնվում նաև նորառաքելական համայնքը, որի էլ մենք պատկանում ենք: Մենք բոլորս հավատում ենք Հիսուսին և սիրում ենք նրան:

Մեր համայնքում երբեմն ելույթ է ունենում մանկական երգչախումբը:



Էլ ի՞նչ կարող եմ ձեզ պատմել:
Իմ սիրելի ուտեստը մսապուրն է:

Բացի այդ, ես հաճույքով գրքեր եմ կարդում: Դրանով ես շատ նոր բաներ եմ սովորում: Դուք լսե՞լ եք Չինգիս Խանի մասին: Միջնադարում նրան հաջողվեց միավորել մոնղոլական ժողովուրդներին, որոնք մինչ այդ պատերազմում էին միմյանց դեմ: Նրա հետնորդները ևս նվաճեցին հսկայան տարածք, որը Չինաստանից մինչև Եվրոպա էր հասնում: Մոնղոլական զորքերը հասան անգամ մինչև Վիեննա: Ասում են, որ այդ ժամանակ մոնղոլական կայսրությունն ամենամեծն էր աշխարհում:

Աղբյուրը՝ անագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 08/2020; լուսանկարները՝ privat; ©oyuna; ©GreenArt - stock.adobe.com; wikipedia.org

Աստծո պատկերով՝ տղամարդ ու կին /մաս 1/

Աստված չէր ուզում, որ սեռերից մեկը ենթակա լինի մյուսին, քանի որ նա երկուսին էլ հավասար ձևով իր պատկերով էր ստեղծել: Սրան դավանաբանությունը կարճ է անդրադառնում: Շրջանային առաքյալների ժողովի շրջաբերականից մեկը պարզաբանում է, թե ինչի մասին է խոսքը, երբ ասվում է, որ նույն պատկերով են ստեղծված :

Դավանաբանության մեջ այն մասին է խոսվում, որ մարդը Աստծո պատկերով է ստեղծված և պարզաբանվում է.,, Տղամարդն ու կինը հավասարապես են ստեղծված Աստծո պատկերով, այնպես, որ նրանք երկուսն էլ էությամբ նման են նրան: Նրանք ստեղծված են ոչ միայն միմյանց համար, այլ՝ միմյանց հետ և ունեն նույն առաջադրանքը՝ ,տիրել, երկրին, այսինքն՝ այն ձևավորել և պահպանել/ ՆԱԵԴ 3,3,2/: Դավանաբանության մեջ կարճ անդրադարձ է կատարվում ,, Տղամարդ և կին՝ Աստծո պատկերով,, թեմային: Ստորև պետք է լրացուցիչ պարզաբանումներ տրվի աստվածաբանական այս կարևոր թեմային: Այս առումով պետք է կարծել, որ Աստծո պատկերով մարդու մասին խոսքը վճռորոշ նշանակություն ունի մարդու հասկացողության համար ինքն իր և արարչագործության մեջ իր առաջադրանքի մասին: Սրանով էլ Աստծո նմանությունը կարող է մարդկային արժանապատվության էական, այսինքն՝ անկախ սեռից՝ բոլոր մարդկանց համարժեքության և հավասար արժանիքների աստվածաշնչյան հիմքը լինել: Ստորև նախ պետք է ավելի մանրամասն ուսումնասիրել տվյալ աստվածաշնչյան տեքստերը, որտեղ խոսքը ընդհանրապես մարդու՝ Աստծուն նման լինելու մասին է, և դրա վրա հիմնված՝ տղամարդու և կնոջ հարաբերության մասին է: Աստվածաշնչյան խոսքերի վրա է հիմնված դավանաբանության 2-րդ մասում ներկայացված մեկնաբանությունը:

Արարչագործության մասին Մովսեսի երկու տեղեկությունները, որոնք զետեղված են Մովսես 1-ինի 1,1-4 և 2, 4-3,24-ում, աստվածաբանական կարևոր հիմնավորումներ են մարդու մասին՝ որպես արարչագործություն, խոսքի: Եթե արարչագործության առաջին պատմությունը վերացական է, ապա երկրորդ պատմությունը, որին մենք անդրադարձել ենք Մովսես 1-ին գրքի 2,4-25 –ում, ակնհայտ պատմողական բնույթ ունի:

Արարչագործության առաջին պատմությունը

1,26,27-ում: Մովսեսի 1-ին գրքի 5,1-ում և 9,6-ում խոսվում է մարդու Աստծուն նման լինելու մասին: Հին կտակարանն ուսումնասիրող Անդրեաս Շյուլեն նկատում է, որ ,, Աստծո պատկերը,, Հին կտակարանի թերևս պատմականորեն ամենաազդեցիկ հասկացությունն է: Արարչագործության առաջին պատմության մեջ / Մովսես 1-ին 1,1-2,4/ Աստված ցույց է տրվում որպես նա, ով վեց օրում, այսինքն՝ նշված ժամանակահատվածում, միայնակ, իր խոսքի միջոցով ձևավորեց կամ կարգավորեց իրականությունը: Ցույց է տրվում, որ այն ամենը, ինչ կա, պարտական է Աստծո խոսքին: Արարչագործության ավարտական փուլում՝ վեցերորդ օրը, ստեղծվեցին նախ կենդանիները, որոնք ապրում են երկրի վրա / Մովսես 1-ին, 1,24,25/: Այն բանից հետո, երբ կային տարբեր կենդանիներ, Աստված դարձավ մարդու ստեղծմանը՝ և Աստված ասաց .,, Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և

երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա,,: Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց ու սասաց. ,, Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, սիրեցեք դրան, իշխեցեք ծովի ձկների, երկքնի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա,,: Մովսես 1-ին, 26-28/:

Մարդու ստեղծումը տարբերվում է մնացած բոլոր երևույթներից: Դա երևում է այն բանում, որ չեզոք ձևովի չի ասվում՝ թող լինի, ինչպես արարչագործության մյուս դեպքերում էր, այլ ասվում է ինքն իր հետ խոսելու եղանակով՝,, Եկեք մարդ ստեղծենք,,: Դոգմատիկ ավանդության մեջ այս նախադասությունը իմաստավորվում է որպես Աստծո երրորդության վկայություն: / հմտ. ՆԱԵԴ 2,4,1 և 3,2,1/: Ինքն իրեն մարդ ստեղծելու հորդորը ծավալվում և վեր է բարձրանում նրանով, որ Աստված ինքն անմիջնորդ հարաբերության մեջ է մարդու հետ, քանի որ այն պետք է ,, պատկերը,, լինի, որը մեզ նման կլինի,,: Դրանով Աստված սերտ հարաբերության մեջ է լինում մարդու հետ, և մարդն էլ նմանապես սերտ հարաբերության մեջ է լինում Աստծո հետ:

Մարդու՝ Աստծուն նման լինելու կարևոր հետևանքը ստացած այն առաջադրանքն է, ըստ որի՝ նա տիրելու է ստեղծված աշխարհը, կենդանիներին և ողջ արարչագործությանը: ,, Դրանից կարելի է եզրակացնել, որ դա պիտի լինի այնպիսի տիրապետություն, որը համապատասխանի Աստծո կարգավորող և պահպանող գործունեությանը, և չի լեգիտիմացնելու աշխարհին տիրելու մարդկային բռնապետությունը,,: Մարդը ներկայացնում է Աստծուն իր արարչագործության մեջ և որպես Աստծո պատկեր՝ պարզաբանել է տալիս նրա էությունը աշխարհում և արարածների առաջ: Նա երկրի վրա Աստծո ներկայացուցիչն է և արարչագործության կառավարիչը,,: Սաղմոս 8,6,7-ը փորձում է մարդու առանձնահատկությունը այլ արարածների համեմատ հետևյալ խոսքերով հասկանալի դարձնել.,, Քո հրեշտակներից փոքր-ինչ ցածր դրիր նրան, և փառք ու պատվով պսակեցիր նրան: Նրան կարգեցիր քո բոլոր ձեռակերտների վրա: Ամեն ինչ դրիր նրա ոտքերի ներքո,,:

Մովսեսի 1-ին գրքի 27-ում գրված է, որ Աստված կատարում է այն, ինչ մտադրվել էր: Նա ստեղծում է մարդուն ,, իր պատկերով,, և որպես ,, տղամարդու և կնոջ հոգնակի միություն,,: Նախ ,, մարդ,, հասկացությունը օգտագործվում է որպես ,, սեռային հասկացություն,, և իր բովանդակային կոնկերտացումն է գտնում ,,տղամարդ և կին,, կենսաբանական բնութագրմամբ: Աստծո պատկերով ստեղծված մարդուն պատկանում են երկու սեռերն էլ: ,, Տղամարդն ու կինը միացյալ արտացոլում են Աստծո փառահեղությունը, միացյալ շարունակում են Աստծո արարչագործությունը: Նա / մարդը/ իրենից վեր ունի միայն Աստծուն: Այսպես, նա գտնվում է աշխարհի և Աստծո մեջտեղում: Տղամարդը կամ կինը, այսինքն՝ ,,մարդը,, հավասարապես Աստծո պատկերով են, երկուսն էլ նույնական, այսինքն՝ անմիջական և պարտադիր կերպով կախյալ հարաբերության մեջ են գտնվում Աստծո հետ: Այդ պատճառով էլ տղամարդն ու կինը, ովքեր ,,մարդն են,, ; ունեն արարչագործության նույն առաջադրանքը, այն է՝ տիրել և արարչագործության մեջ Աստծուն ներկայացնել: Դրանից բացի, հոգնակի միությունը վկայում է այն մասին, որ մարդը իր եսակենտրոնությամբ և իր կողմից ընտրած մեկուսացման մեջ իր մարդ լինելը, այսինքն՝ Աստծո պատկերով լինելը, իսկապես չի կարող իրացնել: Հոգնակի միությունը կոնկրետանում է միայն փոխադարձ Դու-ին անցնելով: ,,Տղամարդն ու կինը, կինը և տղամարդը պատկանում են միմյանց, քանի որ մարդը հենց սկզբից ստեղծված է ընկերակցության համար:

Աստված օրհնում է տղամարդուն ու կնոջը, դիմում նրանց և առաջադրանք ստանում՝,, Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրան,,: Մարդուն առաջարկվում է աճել, որպեսզի պատմության ընթացքում կարողանա իրականացնել արարչագործության մեջ Աստծոն ներկայացնելու առաջադրանքը: Շյուլեն վկայում է, որ Մովսեսի 1-ին գրքի 28-ում փոքր ինչ ագրեսիվ տերմինաբանությունը / ,, տիրեցեք դրան,,/ Մովսեսի 1-ին գրքի 9,6-12-ում համատեքստով մեկնաբանվում է այսպես՝ մարդուն տրված տիրելու առաջադրանքը նպատակ ունի ,,կանխելու բռնության տարածումն ու կիրառումը,,:

Մովսեսի 1-ինի 1,27-ի տերմինաբանությունը նորից կիրառվել է Մովսեսի 1-ի գրքի 5, 1,2-ում, և կարծես այն ընդունվել է որպես պատմական զարգացման նախապայման՝ ,,Սա մարդկանց ազգաբանության այն օրերի պատմությունն է, երբ Աստված ստեղծեց Ադամին: Ըստ Աստծու պատկերի ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց, օրհնեց և ադամ, այսինքն՝մարդ անվանեց նրանց այն օրը, երբ ստեղծեց նրանց,,:

Նախ հայացք է գցվում մարդու ստեղծմանը և մեկ անգամ ևս շեշտվում, որ նա ստեղծվել է արական և իգական սեռերով: Տղամարդն ու կինը Աստծո կողմից ստացել են ,, մարդ,, բնորոշումը և բազմանալու առաջադրանք ստացել: Այն, որ մարդը հետևում է այդ առաջադրանքին, բազմանում է և ձևավորում այն աշխարհը, որը վստահվել է նրան, պարզաբանվում է ծագումնաբանական ցուցակի ձևով / Մովսես 1-ին 5, 3-32/:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Աստծո արարչագործական կամքով է հիմնվել ոչ միայն մարդու երկսեռությունը, այլ նաև տղամարդու և կնոջ հավասար արժեքավոր լինելը: Երկու սեռերն էլ միասին Աստծո պատկերն են՝ պարգևատրված նույն արժանիքներով: Կնոջ ենթակայությունը տղամարդուն՝ ըստ Մովսեսի 1-ին գրքի 1-ին գրքի, արարչագործությանը հակադիր է, բնութագրվում է որպես ոչ աստվածահաճո, այն Աստծո բարի արարչագործության մաս չէ:

Արարչագործության երկրորդ պատմությունը

Մինչ արարչագործության առաջին պատմությունը ներառում է աշխարհի ստեղծումը և բաժանվում է վեց էտապների, արարչագործության երկրորդ պատմությունը ներկայանում է գործող անձերի պատմության ձևով, ովքեր արձագանքում են միմյանց: Շյուլեն շեշտում է, որ արարչագործության առաջին պատմության ներկայացումը՝ չնայած իր պարփակվածությանը, ,,շարունակելի է,,: Այդ ,, շարունակությունը,, ներկայացնում է արարչագործության երկրորդ պատմությունը, թեև այն ավելի վաղ է կազմվել ե և այլ ավանդական գծից է ծագել: Այսինքն՝ արարչագործության այս երկու պատմությունները մեկուսացված չեն իրարից, այլ իրար հետ կապված են մի նոր միությամբ: ,, Դրախտի պատմությունը հասկացվում է որպես մեկնաբանություն, խորացում և նաև ստուգում՝ ընդհանրապես կենդանի էակների և մասնավորապես մարդու ստեղծման մասին պատմության ,,:

Տեքստի այն տեղերը, որոնք վերաբերում են մարդու ստեղծմանը, պետք է այսուհետ ավելի մանրամասն դիտարկել՝

[7]Այն ժամանակ Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից և նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդն եղավ կենդանի էակ:
18 Եվ Տեր Աստված ասաց. ,, Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար,,:
[19]Տեր Աստված ստեղծեց նաև դաշտային բոլոր գազաններին, երկնքի բոլոր թռչուններին և բերեց Ադամի մոտ, որ տեսնի, թե Ադամը ինչ անուն կտա դրանց: Եվ Ադամն ինչ անուն որ տար ամեն կենդանուն, այն էլ կլիներ դրա անունը:
[20]Ադամը բոլոր անասուններին, երկնքի բոլոր թռչուններին և դաշտային բոլոր գազաններին տվեց անուններ, բայց Ադամը չգտավ իր նմանությունն ունեցող մի օգնական:
[21]Տեր Աստված թմրություն բերեց Ադամի վրա, և սա քնեց: Աստված հանեց նրա կողոսկրերից մեկը և այդ տեղը մաշկով ծածկեց:
[22]Տեր Աստված Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց և նրան բերեց Ադամի մոտ:
[23]Ադամն ասաց. ,, Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց,,:
[24]Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք լինեն մի մարմին:
[25]Եվ երկուսն էլ՝ Ադամն ու իր կինը, մերկ էին ու չէին ամաչում:

7-րդ տողում ասվում է այն մասին, որ մարդը Աստծո կողմից հողից ստեղծվեց: Ինչպես մի կավագործ՝ Աստված հողից կերպարանք ստեղծեց: ,Ադամ, բնորոշումը այստեղ չունի դեռ ոչ մի սեռային նկատառում, այլ պարզապես բնորոշում է որպես ,, պրոտոպլաստ,,: ,,Ադամ,, բառը վկայակոչում է ,, Ադամահը,,; այսինքն՝ երկիրը, գետինը, հողը, որից ստեղծվել է մարդը: Նկատելի է, որ Աստծո նմանությամբ հասկացությունը, որը Մովսեսի 1-ին գրքի 1,27,28-ում մարդաստեղծման մեջ գլխավոր նշանակություն ունի, բացակայում է: Անշուշտ, կա դրա ակնհայտ համարժեքը, այն, որ Աստված փչեց մարդու դեմքին, որպեսզի նրան կենդանության շունչ նվիրաբերի: Այն կերպարանքը, որ Աստված ստեղծեց հողից, նրանից անմիջապես ստացավ կենդանարար շունչը:

Աստված սերտ, ներքին կապով է դառնում դեպի մարդը, որը նա չի անում մնացած արարածների հանդեպ: ,, Կենդանանր շունչը,, ; որը ստանում է ձևավորված կավը, արդյունքում ունենում է ոչ միայն ֆիզիկական կենդանություն, որը հատուկ է կենդանիներին, այլ նախադրյալ է ստեղծում նրա անձնականության համար: Կենդանարար շունչը միևնույն ժամանակ Աստծո շունչն է, և դրանից է բխում մարդու եզակի լինելը արարչագործության մեջ: ,,Այսպես, դրախտի պատմության մեջ մարդու ստեղծումը դրվում է Աստծո նմանությամբ լինելու համատեքստում: Մարդու առանձնահատկությունը, որպես ,, Աստծո պատկեր,, նրա առաջադրանքը արարչագործության մեջ ընդգծելու նպատակով այն ներկայացվում է նաև արարչագործության երկրորդ պատմության մեջ: Մարդը դառնում է կենդանի էակ, այնպիսին, ով կարողանում է և պետք է իր շրջակայքը ձևավորի: ,, Տեր Աստված իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի ու պահպանի այն,, / Մովսես 1-ին 2,15/:

,, Մշակելը,, և պահպանելը,, կառուցողական գործունեություններ են, որոնք հատուկ են մարդուն, այստեղ հստակ զուգահեռ է անցկացվում Մովսեսի 1-ին գրքի 1,26-ում գրված,, տիրել,, հասկացության հետ :

18-րդ տողում նշվում է այն հիմնավորումը, որ մարդկային կյանքը իրագործելի է հասարակության մեջ՝ ,, Լավ չէ, որ մարդը միայնակ լինի,,: Օգնականը, ով պետք է ստեղծվի մարդու համար, պետք է համապատասխանի նրան: Բառացի ասած՝18-րդ տողը այսպես է մեկնաբանվում՝ ,, նրա նմանությամբ օգնական,,: Շյուլեն վկայակոչում է այն մասին, որ ,,նրա նմանությամբ,, արտահայտությունը հենց որակավորում է օգնականին: ,, Մարդը պետք է […] օգնական ունենա, ով ոչ միայն նրա հետ և նրա մոտ լինի, այլ նույն հայացքներն ունենա, և նրա ներկայությունն Ադամն ինքը հասկանա:

19-րդ տողում խոսվում է կենդանիների արարման մասին, որոնք ևս հողից են ստեղծվում, ինչպես մարդը: Արարչագործության մեջ մարդու առանձնահատկությունը նրանով է տեսանելի, որ Աստված կենդանիներին նրա մոտ է բերում, որպեսզի նա նրանց անուններ տա: Մարդը կենդանիներին անուններ է տալիս և ստեղծված աշխարհում կանոնակարգված համակարգ է ստեղծում: Սակայն, կենդանիները չեն կարողանում մարդու համար այն օգնականն ու ընկերակիցը լինել, որը իսկապես կհամապատասխանի նրան: /տող 20/:

Թե ով կհամապատասխանի մարդուն, ով նրան նման օգնական կլինի, դրա մասին խոսվում է 22-րդ և 23-րդ տողերում: Այդ օգնականը ստեղծվում է ոչ թե հողից, այլ՝ մարդու մարմնից: ,, Կողոսկրը,, ; որից ստեղծվում է կինը, խորհրդանիշն է այն բանի, որ մարդու մարմինը և նրա նմանությամբ ստեղծվածի մարմինը նույն ձևի են և նույն էությունն ունեն: Տղամարդու և նրան նմանությամբ ստեղծվածի միջև ֆիզիկական միությունը շեշտվում է հետևյալում՝ ,, Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց,,: Ադամը՝, մարդը, ով ստեղծվեց առանց որևէ սեռային յուրահատկության, և միաժամանակ ում մեջ սեռային պոտենցիալ կար, ցանկանում էր մեկին, ով կլիներ իր նմանությամբ, նա կլինի տղամարդը, իսկ մյուսը՝ կբնորոշվի և կճանաչվի որպես կին: Երկուսի միջև առկա է ֆիզիկական միություն, նրանք նույն ,, նյութից են,,: Տղամարդու և կնոջ հիերարխիայի միտքը Աստծո արարչական գործունեության մեջ տեղ չունի: 23-րդ տողում տղամարդը ավելի շատ իր ուրախությունն է արտահայտում այն բանի համար, որ նա ունի իր նմանությամբ օգնական:

Մինչ 23-րդ տողում տղամարդու և կնոջ միությունը հիմնվում է նույն կազմվածքի շնորհիվ, 24-րդ տողում / ,,Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք է լինեն մի մարմին,, / խոսվում է այն մասին, որ տղամարդու և կնոջ միությունը ստեղծվում է ,, պահանջի,, ; երկուստեք ձգողականության և միմյանցից կախված լինելու հիման վրա: Այստեղ վկայվում է առանձնահատուկ հուզական հարաբերության մասին, որ կարող է գոյություն ունենալ տարբեր սեռերի միջև, որն ավելի սերտ է, քան ցանկացած բարեկամական հարաբերություն:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ արարչագործության երկրորդ պատմությունը ևս չի նշում տղամարդուն կնոջ ենթակայության մասին: Ըստ Մովսեսի 1-ին գրքի 2-ի՝ մարդը նախ գոյություն ունի միայնակ, նա սեռային բաժանում չունի: Նրան պակասում էր մի օգնական, որը նման կլիներ իրեն: Այս պատճառով Աստված արարում է նույն արժանիքներով և նույն լիազորությամբ օժտված օգնական, որպեսզի հաղթահարի մարդկային միայնակությունը: Տղամարդն ու կինը ստեղծված են միմյանց համար, որպեսզի միմյանց օգնեն և այնպես գործեն, որ կարողանան աստվածահաճո և լավ կյանք վարել:

Լուսանկարները՝ ©zatletic - stock.adobe.com

---

1 Անդրեաս Շյուլե՝ Նախապատմություն / Ծննդոց 1-11/ , Յուրիխ 2009

2 Շթինգլհամմեր Հերմանն՝ Ներածություն արարչագործական աստվածաբանության մեջ, Դարմշդթադթ 2011

3 Հերբերթ Հաագ՝Արվեստ: Արարչագործության պատմություն, Աստվածաշնչյան բառապաշար 2-րդ հրատարակություն, Ֆրայբուրգ, Քյոլն 1968

4 Պրոտոպլաստ բառի ներքո նկատի չի առնված մարդու տարբերակված նախատիպը:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսսթրասսե 243,8051 Յուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիխ Բիշոֆֆ ՍՊԸ, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 632563 Նոյ- Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Հիմնականում հարուստ կանայք էին կարողանում նվիրվել համայնքի բարեգործական աշխատանքներին

Foto: © pixs:sell - stock.adobe.com

Լուսանկարները՝ Wikimedia Commons

Կանայք վաղ շրջանի եկեղեցում

Կին և տղամարդ- համարժե՞ք են նրանք որպես Աստծո պատկեր: Վաղ շրջանի եկեղեցում կանանց մասին վկայությունների պակաս չկա: Սակայն, հարցը նրանում է, թե դրանք ինչ են ասում կնոջ դերի մասին եկեղեցում:

Հռոմեա- հելլենիստական անտիկ շրջանում կնոջ կարգավիճակը տղամարդու ենթադրյալ առավելության ներքո էր, հունական մշակութային շրջանակներում այն ավելի ուժեղ էր արտահայտված, քան՝ հռոմեական: Դրանից հետևում է, որ կնոջ դերին անդրադարձ չի կատարվել, անգամ քրիստոնյա հեղինակների կողմից, ինչպես Պողոսը, երբ նա գրում էր կանանց մասին: Նա իր ժամանակի զավակն է, և հետևաբար, տղամարդու և կնոջ հարաբերությունը սահմանում է որպես ստորադաս հարաբերություն: Այնուամենայնիվ, համայնքներում իրականությունը ավելի բազմատեսակ է:

Կանայք կայսերական ժամանակաշրջանի հռոմեական կայսրությունում

Հռոմեական կայսրությունում եկեղեցու սկզբնական շրջանում կանայք ավելի շատ իրավունքների էին տիրում, քան մնացած բոլոր մշակութային շրջանակներում: Կայսերական ժամանակաշրջանում կանայք գործունյա էին և կարողանում էին կառավարել: Նրանք չէին կարող հռոմեական օրենսդրության համաձայն ստիպված ամուսնանալ և հնարավորություն ունեին տղամարդուց բաժանվելու: Բարձր խավի կանայք կրթության հնարավորություն ունեին: Առաջին դարում այդ դասի կանանց կանոնակարգված ազատություն էր տրված:

Կանայք քրիստոնեության վաղ շրջանում

Նորկտակարանային գրվածքներում անուններ տալը նշան է այն բանի, որ կանայք վաղ շրջանի եկեղեցում գլխավոր դեր են խաղացել: Ֆյոբեն, Փրիսկան, Նիմֆան կամ Քլոյեն ղեկավարում էին տնային համայնքներ և համայնքներում ստանձնում էին ղեկավար աշխատանքներ: Պողոսի կողմից հռոմեցիներին գրված նամակում Յունիան ներկայացվում է որպես՝ ,,առաքյալների շրջանում՝ հայտնի և և իմ առաջ՝ Քրիստոսով,,: Էուսեբիուս Կեսարեցին իր եկեղեցական պատմություններում հայտնում է տնային համայնքների առաջնորդուհիների, Փիլիպպոսի դուստրերի ավանդույթով՝ մարգարեուհիների, քրիստոնյա միսիոներուհիների և բազմաթիվ մարտիրոսուհիների մասին, անգամ, եթե հաճախ կանանց անունները չեն նշվում: Վաղ շրջանի եկեղեցում մեկ այլ հատկանիշ էր այն, որ հոգևորությունը և դրանից բխող հոգևոր իշխանությունը դեռևս որևէ պաշտոնի չէր առնչվում: Հռոմեական սենատոր Փլինիուս Կրտսերը ոչ թե կառավարիչների, այլ երկու կանանց է ձերբակալել տալիս և հարցաքննության ենթարկում, ովքեր համարվում էին համայնքի հոգևոր հեղինակություններ:

Կուսության իդեալը

Երկրային կյանքից հեռանալը, մերժման իդեալը, բարձրին, հոգևորին ձգտելը և աշխարհի մոտալուտ վախճանի սպասումը ոգեշնչել է ոչ միայն քրիստոնյաներին, այլ հատուկ է շատ աղանդների և պաշտամունքների: Կուսության վաղ քրիստոնեական արժեքորումը հենց այս պատկերի մեջ է տեղավորվում: Ամուսնու և մոր ավանդական դերի ժխտումը թույլ է տալիս ավելի հարուստ կանանց իրենց նվիրել համայնքում բարեգործական աշխատանքների կատարմանը և օգտագործել իրենց հոգևոր շնորհները:

Ժուժկալությունը գնահատվում էր որպես առանձնահատուկ էթիկական որակ և հոգևոր կյանքի ու բարոյական կատարելության արտահայտություն: Համայնքում բարձր դիրքի պատճառով կուսությունը երիտասարդ կանանց համար չաձազանց ցանկալի էր, կայսրության արևելքում կույսերը անգամ հոգևորականության շարքերին էին դասվում:

Կույսերը այրիների և սարկավագուհիների նման յուրահատուկ դաս էին կազմում եկեղեցում և կարողանում էին ղեկավար ֆունկցիաներ կատարել: Վաղ շրջանի եկեղեցու որոշ համայնքներում կույսերը ձեռնադրված սարկավագուհիների նկատմամբ հիերարխիա էին ունենում: Վանականների ի հայտ գալով կույսերը անհետացան համայնքային կյանքից, այդ պահից ի վեր նրանք գոյություն ունեին միայն վանքերում:

Սարկավագուհիների ծառայությունը

Համայնքում բարեգործական ծառայության հետ մեկտեղ՝ սարկավագուհիները ամենից առաջ պատասխանատու էին մկրտվել ցանկացողների, որոշ դեպքերում նաև տղամարդ թեկնածուների կրոնական ուսուցման համար: Սարկավագուհիները ընտրվում և նշանակվում էին համայնքի կողմից: 4-րդ դարում Եգիպտոսում քննարկվում էր սարկավագուհիների կողմից նշխարի բաժանման հարցը: Նրանք իրավունք ունեին հիվանդների համար նշխար տանել, սակայն Սուրբ Հաղորդությունը նվիրաբերելու արարողությանը նրանք չէին մասնակցում:

6-րդ դարում ֆրանկյան մի քանի եպիսկոպոսներ օծում էին սարկավագուհիներին: Սակայն, այս պրակտիկան եկեղեցում երկար չտևեց, Օրլեանի ժողովը արգելեց կանանց որևէ ֆունկցիա կատարել եկեղեցում: Շատ քիչ վկայություններ կան պատճառների մասին:

Եկեղեցու կանոնակարգից կարելի է եզրակացնել, որ արարողակարգի զարգացումը նպաստեց սարկավագության նշանակության կորստին: Եկեղեցական պաշտոնների ուժեղ հիերարխիայի առաջացումը տեղ չէր տալիս վաղ շրջանի քրիստոնեական համայնքների հավասար բարոյագիտական նորմերին:

Վաղ շրջանի եկեղեցու մասին եզրահանգումը

IԱռաջին դարի սկզբում եկեղեցում կանայք նշանակալի դեր են խաղացել համայնքներում և քրիստոնեության տարածման գործում, քան ավելի ուշ շրջանում: Հռոմեական կայսրության տապալումը և ժողովուրդների միգրացիայի խառնաշփոթը վերջ դրեց այդ առաջընթացին: Քաղաքական զարգացումները հանգեցրին նրան, որ ձևավորվեց արական ուժեղ հիերարխիա, և կանանց դերը սահմանափակվեց միայն բարեգործական ծառայություն կատարելով: Վաղ շրջանի եկեղեցում կանանց կարևոր դերը - այս մասին է հիշեցնում այս հոդվածը, որը բավականին երկար տարբերակով լույս է տեսել ամսագրի 2018/02 հրատարակությունում: Հասարակության մեջ զարգացումները- սա է նկարագրված այս շարքի հաջորդ հոդվածում:

Քրիստոսը՝ մեր ապագան

,,Սկզբից ևեթ Տիրոջը մշտապես տեսնում էի իմ առջև, նա իմ աջ կողմում է, որպեսզի չսասանվեմ,,։

Սաղմոս 16,8

New Apostolic Church
International